

մի՛ կտորի, վարձակալի՜ր
Be Green, Rent Your Christmas Tree
010-55-52-09
093-68-98-83
www.sunchild.org



ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՂԱՆԱՔԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ

Երևանի կենդանաբանական այգին շնորհավորում է բոլորի Ամանորն ու Սուրբ ծնունդը

Երևանի կենդանաբանական այգին շնորհավորում է բոլորի Ամանորն ու Սուրբ ծնունդը և հրավիրում այս գեղեցիկ տոնական օրերին դեկտեմբերի 15-ից Հունվար 15-ը այցելել Հյուսիսային պողոտա և մասնակցել Ամանորյա տոնավաճառին, որտեղ այգին Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ ներկայանում է իր տաղավարով: Տոնավաճառը կազմակերպվում է առաջին անգամ: Այգին կներկայանա «Չու» ամսագրով, Երևանի կենդանաբանական այգու 2013-ի նոր օրացույցով, ինչպես նաև այգու էկոլոգիական ակումբի սաների կողմից պատրաստված Ամանորյա ձեռագործ կախազարդերով, տոնածառի խաղալիքներով, հուշանվերներով, այգու կենդանատեսակները պատկերող կրծքանշաններով, վերամշակված թղթից պատրաստված նոթատետրերով, նկարչական պլոմներով ու նոր տարվա բացիկներով: Դեկտեմբերի 15-ից մինչև 30-ը տոնավաճառում կներկայացվի նաև «Ապրող ծառե նախագիծ»: Ցանկացողները կարող են այցելել կենդանաբանական այգի և այգու տարածքից վարձակալել կամ ձեռք բերել Ամանորյա «կենդանի» ծառեր: Ողջ հասույթը կտրամադրվի Երևանի կենդանաբանական այգու կենդանիների խնամքին, իսկ ծառերը գարնանը կտնկվեն կենդանաբանական այգու տարածքում: Այսպիսով՝ սպասում ենք Ձեզ դեկտեմբերի 15-ից հունվարի 15-ը Հյուսիսային պողոտայում Ամանորյա տոնավաճառին:



Սիրելի՛ ընկերներ,

Մրտանց շնորհավորում ենք բոլորիդ գալիք Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:
Թող 2013-ը նորանոր բարձունքների նվաճման տարի լինի:
2012 թ-ին և դրան նախորդող տարիներին ձեռք բերված բոլոր նվաճումները հնարավոր են դարձել միայն մեր գործընկերների և բարեկամների շնորհիվ:
Շնորհակալ ենք, որ մեր կողքին եք:

Երևանի կենդանաբանական այգու համագործակցությունը՝ Երուսաղեմի Բիբլիական կենդանաբանական այգու հետ

Երևանի կենդանաբանական այգին այս տարի ունեցավ մի շարք ձեռքբերումներ: Կարևոր ձեռքբերումներից մեկը Կենդանաբանական Այգիների և Ավվարիումների Եվրոպական Ասոցիացիայի (EAZA) նոր թեկնածու-անդամ դառնալն էր: Խիստ ընտրության արդյունքում 2012թ-ի ապրիլին Մյունխենում կայացած ժողովի ժամանակ EAZA-ն հաստատեց Երևանի կենդանաբանական այգու հայտը: Ներկայումս EAZA-ի անդամ են 345 կազմակերպություններ՝ աշխարհի 41 երկրներից: 1992թ-ին հիմնադրված EAZA կազմակերպության հիմնական նպատակն է աջակցել և նպաստել Եվրոպական կենդանաբանական այգիների և ավվարիումների միջև համագործակցությանը՝ կրթության, հետազոտության և բնապահպանության ոլորտներում: EAZA-ն պատրաստ է աջակցելու այն կենդանաբանական այգիներին, որոնք ցանկանում են բարելավել կենդանիների կեցության պայմանները և այգու կառավարման չափանիշները: Երևանի կենդանաբանական այգու համար EAZA թեկնածու-անդամ լինելը մեծ հնարավորություն է ընձեռում դառնալու միջազգային ահռելի ցանցի մի մասնիկը: Այս կերպ այգին հնարավորություն կունենա դառնալ ժամանակակից և միջազգային չափանիշներին համապատասխան գործող կառույց:

Երևանի կենդանաբանական այգու համար հատկանշական էր նաև սույն թվականի նոյեմբերին 19-ին Իսրայելի արտաքին գործերի նախարարության և Երուսաղեմի Բիբլիական կենդանաբանական այգու պաշտոնական հրավերը: Այս հրավերը հիմք դրեց երկու կառույցների համագործակցությանը:

Նոյեմբերի 19-ից 24-ը Երևանի կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանն այցելեց Երուսաղեմի Բիբլիական կենդանաբանական այգի: Հանդիպման ընթացքում քննարկվեցին բազմաթիվ հարցեր, ինչի արդյունքում ձեռք բերվեցին մի շարք պայմանավորվածություններ: Ըստ որի Երևանի կենդանաբանական այգին, որպես EAZA-ի թեկնածու-անդամ, կենդանիների համար կառուցելու է նոր ազատավանդակներ՝ EAZA-ի չափորոշիչների համապատասխան, իսկ Երուսաղեմի Բիբլիական այգին կնվիրաբերի այնպիսի կենդանատեսակների որոնք մինչ օրս չի ունեցել այգին՝ շիմպանզեներ, մրջնակներ, ընձուղտներ և այլն:

Համագործակցությունը կկայանա նաև փորձի փոխանակման և համատեղ այցելությունների և մասնագետների վերապատրաստման գործում: Այգու անասնաբույժը վերապատրաստման նպատակով կգործուղվի Երուսաղեմի Բիբլիական այգի: Իսկ 2013 թվականի սպասվում է Երուսաղեմի Բիբլիական կենդանաբանական այգու տնօրենի, գլխավոր անասնաբույժի և այլ մասնագետների այցը Երևանի կենդանաբանական այգի՝ դասընթացների կազմակերպման, փորձի փոխանակման նպատակով: Հետագայում կընդլայնվի համագործակցությունը նաև կրթական ոլորտում և կենդանաբանական այգու և կկիրառվի Հայաստանում բուժման նոր մեթոդը անիմաթերապիայի՝ բուժում կենդանիների միջոցով:



Երևանի կենդանաբանական այգու բազմաթիվ կենդանատեսակների մոտ զուգավորման շրջան է: Այս տարի կբազմացնեն Սև անգղերին, Գիշանգղերին և Գառնանգղերին: Գիշանգղերն ու (Neophron percnopterus Linnaeus) Սև անգղերը (Cinereous Vulture) Կարմիր գրքի IUCN չափորոշիչներով՝ գնահատվում են որպես «վտանգված» տեսակ, իսկ Գառնանգղերը՝ (Gypaetus barbatus Linnaeus) «խոցելի»: Այս տեսակները բազմացնելու նպատակով՝ տվյալ թռչունների նախապես վերցվել են արյան անալիզներ, ինչի արդյունքում որոշվել են թռչունների սեռը: Ընտրված բոլոր թռչունների բնադրման համար ստեղծվել են համապատասխան վայրեր և տեղափոխվել են ավելի հարմար ազատավանդակներ: Սև անգղերի մոտ արդեն կա ձևավորված մեկ հիմնական զույգ: Երևանի կենդանաբանական այգու այլ բաժիններում բնակվող կենդանիները, որոնք ի սկզբանե զույգերով են ապրում, նրանց մոտ բնականաբար, զուգավորումը կատարվում է ավելի կանխատեսելի ժամանակահատվածում: Եվրոպական

եղնիկների, (Dama dama), Հայկական մուֆլոնների (Ovis orientalis gmelini), Բեզդարյան այծերի (Capra aegagrus aegagrus) մոտ հիմա նույնպես զուգավորման շրջան է և արդյունքներին կարելի է սպասել արդեն գարնանը: Այգին ունի 24 թև Սպիտակագլուխ անգղ: Նրանք ապրում են խմբերով ու չնայած մեծ բազմությանը՝ այգու նեղ պայմաններում կարողանում են բազմանալ: Նրանք ամեն տարի կանոնավոր ձվադրում են և նախատեսված ժամանակին տալիս նոր սերունդ: Բացի վերընշվածներից՝ զուգավորվել են նաև Բեզդարյան և Կամբերուկյան այծերը, Հայկական մուֆլոնները, Եվրոպական ու Պտավոր եղնիկները, Ուղտայծերը, Բեննետա կենդանուները: Չուգավորման արդյունքներին կսպասենք հաջորդ տարի:

Հայ նկարիչների նվիրաբերությունը՝ Երևանի կենդանաբանական այգուն

Արմենիա Մարիոթ հյուրանոցում դեկտեմբերի 14-ին տեղի ունեցավ Երևանի կենդանաբանական այգու և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) հերթական խոշոր նախաձեռնությունը: Այս նախաձեռնության մեկնարկը տրվեց Կենդանաբանական այգու Բարեգործական ընթրիքում: Ուշագրավն այն էր, որ ցանկություն հայտնողների թիվը գերազանցեց բոլոր սպասելիքները: Բարեգործական ընթրիքի ամենակարևոր և ուշագրավ պահն անցկացված աճուրդն էր, որից զույգացած ամբողջ հասույթն ուղղվելու է Երևանի կենդանաբանական այգու անասնաբուժական կենտրոնի ստեղծմանը: Աճուրդը բավականին աշխույժ, լարված ու ցանկացողների մեծ մասնակցությամբ տեղի ունեցավ: Սա ավելի քան հասկանալի էր, քանի որ աճուրդի էին ներկայացված ժամանակակից հայ ձանաչված 10 նկարիչների հատուկ այդ բարեգործական նպատակի համար նկարված 14 կտավները: Նկարիչներ Արա Ասլանյանը, Սարո Գալսեցը, Ռոբերտ Էլիբեկյանը, Գագիկ Ղազանչյանը, Մարի Ադամյանը, Արշակ Սարգսյանը, Մարինա Դիլանյանը, Նուրը (Արման Դավթյանը), Սարգիս Անտոնյանը, Գաբրի (Գաբրիել Մանուկյան) կենդանական թեմատիկայի շրջանակում ստեղծել էին կտավներ և դրանք առանց որևէ նյութական անկախիքի նվիրաբերել Երևանի կենդանաբանական այգուն: Այգու բարեգործական այս կարևոր նախաձեռնությունը զարգացման խորհրդի անդամ Միքայել Դովլաթյանի խոսքերով՝ «Շատ կարևոր է, որ այգին դառնա բոլորիս համար Ազգային նախագիծ, ուր յուրաքանչյուր ոք անկախ մասնագիտությունից իր մասով ներդրում ունենա այս նախագծում: Կենդանաբանական այգին ոչ միայն կենդանիների ցուցադրման տեղ է, այլ մեր հասարակության վերաբերմունքն է մեզ շրջապատող միջավայրի, ծառի, ծաղիկի բնության հանդեպ հոգածության և իհարկե էկո-մտածողության այս տարածքը քաղաքացիական հասարակության զարգացման շարժառիթի չափորոշիչ կարելի է համարել»: Բարեգործական ընթրիքի գումարը կազմեց շուրջ 30 միլիոն ՀՀ դրամ: Այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանն իր շնորհակալությունը հայտնեց բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն ունեցան այս գործում:

